ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

09 հուլիս, 2015թ. ք. Երևան

«Կոռուպցիոն ռիսկերը պետական գնումների ոլորտում» հակակոռուպցիոն միջոցառման

2015 թվականի հուլիսի 10-ին Գավառ քաղաքում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը և գործընկեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը Եվրոպական միության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպում են հակակոռուպցիոն միջոցառում «Կոռուպցիոն ռիսկերը պետական գնումների ոլորտում» թեմայով:

Միջոցառմանը մասնակցելու են ներկայացուցիչներ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունից և ԵԱՀԿ երևանյան գրասենյակից, միջազգային կազմակերպություններից, Գեղարքունիքի մարզի պետական կառավարման մարմիններից, քաղաքացիական հասարակությունից և ԶԼՄ-ներից, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայից և «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի փորձագետները:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են գալու Հայաստանում Եվրոպական Միության ներկայացուցչության տնտեսական խորհրդական Ալեսանդրո Զանոտան, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ, ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը: Ողջույնի խոսքերին հաջորդելու են զեկույցներ պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի և միջազգային փորձի, ինչպես նաև այդ ոլորտի նկատմամբ հասարակական վերահսկողության վերաբերյալ:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 15.600 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Կատարող՝ Նարինե Կարապետյան,Էլ.փոստ՝ pr@ayla.am

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճե: +37410 56 03 60

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս +374 10 229610
Հեռապատճե +374 10 229615

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում: